Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎՈՒՄ

SDA Strategic Development Agency
Strategies for Development

ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ ՀՀ Սյունիքի և Վայոց Ձորի 100 գյուղական բնակավայրեր

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ՝ Շվեյցարիայի Զարգացման և Համագործակցության Գործակալություն (ՇԶՀԳ)

ԾՐԱԳԻՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ Է՝ «Ռազմավարական զարգացման գործակալություն» (ՌԶԳ) ՀԿ

ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ՝ ՀՀ Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն, ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ Սյունիքի և Վայոց Ձորի մարզպետարաններ

ԾՐԱԳՐԻ ԸՆԹԱՑՔԸ՝ 2014 թ.-ի սեպտեմբեր - 2020 թ.-ի օգոստոս

«Անասնապահության զարգացում Հայաստանի հարավում» ծրագիրը **Շվեյցարիայի Զարգացման և Համագործակցության Գործակալության (ՇԶՀԳ)** կողմից ֆինանսավորված «Անասնապահության զարգացում Սյունիքի մարզում» ծրագրի տրամաբանական շարունակությունն է և մշակվել է՝ հաշվի առնելով նախկինում ունեցած արդյունքներն ու ձեռքբերումները:

Ծրագրի **նպատակն է** նպաստել Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում անասնապահության ոլորտում ներգրավված կին և տղամարդ ֆերմերների եկամուտների աճին և տնտեսական հնարավորությունների ընդլայնմանը:

Ծրագիրն ընդգրկում է **Սյունիքի** և **Վայոց Ձորի** մարզերի **100 գյուղական բնակավայրեր՝** ավելի քան **60,000 բնակչությամբ** (շուրջ 14,000 տնային տնտեսություն):

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ.

Կին և տղամարդ ֆերմերների համար կաթի և մսի շուկաների հասանելիության բարելավում՝ կայուն շուկայական մեխանիզմների զարգացման և արժեշղթաների մասնակիցների միջև կապերի խթանման միջոցով:

Կին և տղամարդ ֆերմերների՝ անասնապահության և ֆերմերային տնտեսությունների վարման նոր մոտեցումներ և մեթոդներ կիրառելու կարողությունների և գիտելիքների բարելավում: Ֆերմայի արտադրողականության և արդյունքի մեծացման նպատակով նախատեսվում է ամրապնդել խորհրդատվական, գյուղատնտեսական պարագաներ, ծառայություններ մատուցողների և շուկայի մյուս դերակատարների կարողությունները՝ ֆերմերներին ամենօրյա խորհրդատվություն տրամադրելու և ուսուցանելու, տեղեկատվության փոխանակման և տարածման հարցերում:

Կին և տղամարդ ֆերմերների գյուղատնտեսական պարագաների և աջակցող ծառայությունների (անասնաբուժական ծառայություններ, կենդանիների արհեստական սերմնավորում և ցեղատեսակի բարելավում, գյուղատնտեսական պարագաների մատակարարում և այլն) հասանելիության բարելավում՝ շուկայի մասնակիցների շրջանում սահմանափակ ներդրումային նախաձեռնությունների և տեղական կարողությունների զարգացման, ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացման, ինչպես նաև՝ պետական մարմինների հետ երկխոսության հաստատման միջոցով:

Տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների հզորացում՝ աջակցելու գյուղական բնակավայրերի տնտեսական զարգացմանը, մասնավորապես, անասնապահության ոլորտին վերաբերող հարցերում: Համայնքային և մարզային իշխանությունների կարողությունների ամրապնդում՝ իրենց գործառույթներն առավել արդյունավետ իրականացնելու և անասնապահության ոլորտում ֆերմերների կարիքներին արձագանքելու, ինչպես նաև՝ պետական մակարդակում քաղաքական երկխոսության հաստատման նպատակով:

Ծրագրի շրջանակներում կիրառվում է, **Շուկաներ աղքատների համար (M4P)** մոտեցումը, որն ուղղված է նպաստելու անասնապահության ոլորտում **տևական և կայուն փոփոխությունների ամրապնդմանը՝** ի նպաստ **տարածաշրջանում բնակչության եկամտի աճին և աղքատության կրճատմանը:**

Մոտեցման հիմնական սկզբունքները.

- Ծրագրի շահառուներն են **ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունները / բնակիչները:** Ծրագրի բոլոր գործողություններն ուղղված են ապահովելու անասնապահության ոլորտում վերջիններիս ներգրավվածությունը կամ նպաստելու նրանց գործունեության ընդլայնմանը՝ ստեղծելով հավելյալ եկամուտներ վաստակելու հնարավորություններ:

- Ծրագրի ռազմավարությունն է կաթի և մսի շուկաներում, ինչպես նաև վերջինս սպասարկող ենթաոլորտներում (անասնաբուժական, կենդանիների արհեստական սերմնավորման ծառայություններ, կերարտադրություն և այլն) **կայուն և տևական փոփոխությունների խթանումը՝** ի նպաստ Ծրագրի շահառուների:

- Ծրագրի թիմի աշխատելաոճը հիմնված է անասնապահության ոլորտի մասնակիցներին **ուղղորդելու և կարողությունները զարգացնելու** սկզբունքների վրա:

- Ծրագրի միջամտությունները / գործողությունները **կարճաժամկետ** են ու **նպատակային** և ուղղված են նպաստելու **անասնապահության ոլորտի կայուն զարգացմանը:**

«ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ» ՀԿ

Գլխամասային գրասենյակ
ՀՀ, 0070, ք. Երևան,
Այգեստան 5-րդ փող., տուն 3/1
Հեռ.՝ (+ 374 10) 57 15 59
Հեռ.՝ (+ 374 10) 51 75 28
Բջջ.՝ (+ 374 93) 33 55 84
Ֆաքս՝ (+ 374 10) 57 15 59
Էլ.փոստ՝ sda@netsys.am;
sdaoffice@sdaoffice.com

Գորիսի մասնաճյուղ
ՀՀ,3201, ք. Գորիս,
Արեգունի փող., տուն 84
Հեռ.՝ (+ 374 284) 3 01 17
Բջջ.՝ (+ 374 98) 57 15 59

Էլ.Փոստ՝
a.avanesyan@sdagoris.com

Սիսիանի մասնաճյուղ
ՀՀ,3501, ք. Սիսիան,
Արամ Մանուկյան փ., տուն 5բ
Հեռ.՝ (+ 374 283) 2 60 08
Բջջ.՝ (+ 374 77) 33 55 84;
(+ 374 99) 20 64 64

Էլ. Փոստ՝
v.mkrtumyan@sdasisian.com

SDA Strategic Development Agency
Strategies for Development